«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սաների իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը

Մեթոդիստ՝ Նարինե Հարությունյան

Մանկապարտեզ՝ «Երևանի հ.42 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն.....3

ԳԼՈՒԽ 1

Հայաստանում երեխայի իրավունքների պաշտպանության թիրախային հիմնահարցերը..... 7

ԳԼՈՒԽ 2

Ի՞նչ է երեխայի հանդեպ բռնությունը. սահմանումը, տեսակները և դրսևորման ձևերը 11

Գործնական մաս..... 17

Եզրակացություն..... 22

Գրականության ցանկ..... 23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխաների իրավունքների պաշտպանության հարցերն ընկած են միջազգային իրավաբանության հիմքում: Այդ իրավաբանությունը հստակ է. երեխաները յուրաքանչյուր հասարակության և պետության ապագան են, ուստի պետք է գտնվեն հատուկ և մշտական ուշադրության ներքո՝ առանցքում ունենալով ընտանիքում ապրելու և մեծանալու երեխայի կարևորագույն իրավունքը: Սա է, որ պետք է կազմի ժամանակակից յուրաքանչյուր պետության գործունեության առաջնահերթ առարկան: Երեխաներն իրենց տարիքային, մտավոր և ֆիզիկական զարգացվածության առանձնահատկություններով համարվում են հատուկ խումբ և ունեն մշտական հոգածության ու պաշտպանության կարիք: Իրականում, երեխաների պաշտպանվածության մակարդակը տարբերվում է երկրից երկիր, իսկ աշխարհի տարբեր մասերում ապրող երեխաները կա'մ լիարժեք պաշտպանված են իրենց բոլոր իրավունքների առումով, կա'մ էլ անգամ կյանքի իրավունքի առումով չունեն պաշտպանվածություն: Մինչդեռ, երեխաները յուրաքանչյուր հասարակության և պետության ապագան են, իսկ երեխաների պաշտպանվածության բարձր մակարդակը վկայում է տվյալ հասարակության կամ պետության զարգացվածության և արժանապատվության, ինչպես նաև քաղաքակիրթ և կայուն լինելու մասին:

Երեխան իր անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար պետք է մեծանա ընտանեկան միջավայրում, երջանկության և ըմբռնման մթնոլորտում: Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացման համար անհրաժեշտ նախապայմանների ստեղծումը պետության առջև դրված խնդիրներից մեկն է, քանի որ ընտանիքում ապրելը և պատշաճ դաստիարակություն ստանալը կարևոր երաշխիք է երեխայի մյուս իրավունքների իրացման և երեխայի զարգացման համար: Ստորագրելով ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան ՝ մասնակից երկրները պարտավորվել են հարգել երեխաների իրավունքները և իրականացնել համապատասխան միջոցառումներ՝ արձագանքելու երեխաների իրավունքների խախտումների դեպքերին:

Կոնվենցիայի մասնակից պետությունները ՄԱԿ-ի կանոնադրության մեջ հռչակված սկզբունքների համաձայն ընդունում են, որ մարդկային ընտանիքի բոլոր անդամներին հատուկ է արժանապատվության և հավասար իրավունքների

ճանաչումը: Միաժամանակ զրկանքների, չարաշահումների մասին ավելի շատ փաստերի երևան գալուն զուգընթաց, որոնց զոհերն են դառնում երեխաները, աճում է նաև երեխաների իրավունքներն ամրապնդելու միջազգային հանրության ձգտումը:

Ստորև թվարկվում են հաստատված փաստերից մի քանիսը.

- 6-ից 11 տարեկան 120 միլիոն երեխա զրկված է դպրոց հաճախելու հնարավորությունից:
- Զարգացող երկրներում մինչև 5 տարեկան 155 միլիոն երեխա ապրում է բացարձակ աղքատության պայմաններում:
- Ավելի քան 50 միլիոն երեխա աշխատում է առողջության համար վտանգավոր պայմաններում:
- Սեփական ընտանիքներից լքված շուրջ 100 միլիոն երեխաներ, իրենց գոյությունը պահպանում է մուրացկանության հաշվին:

Երեխաների իրավունքների պաշտպանության հիմքում ընկած է «երեխայի լավագույն շահ» հասկացությունը, որի համաձայն երեխաների շահերը գերակա արժեք են:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների թիվ 12 Ընդհանուր մեկնաբանության համաձայն7 ՝ բոլոր այն գործընթացներում, որտեղ ներգրավված են երեխաները պետք է հարգվեն հետևյալ 9 սկզբունքները.

1. Թափանցիկություն և տեղեկացվածություն Երեխաները պետք է տեղեկացված լինեն իրենց լսված լինելու իրավունքի վերաբերյալ:
2. Կամավորություն Երեխային չպետք է պարտադրել, որպեսզի նա հայտնի իր կարծիքը:
3. Հարգանք Երեխայի կարծիքը պետք է հարգել:
4. Վերաբերելիություն Երեխայի հայտնած կարծիքը պետք է իրական կապ ունենա իր կյանքի հետ: Ավելին, երեխան պետք է կարողանա հայտնել իր կարծիքը այն խնդիրների մասին, որոնք հենց իր կարծիքով կարևոր են իր համար:
5. Երեխայակենտրոն միջավայր և աշխատելու մեթոդներ Երեխաների հետ աշխատելու մեթոդները պետք է լինեն երեխաների համար հարմարեցված, քանի որ երեխաներն ունեն տարբեր կարիքներ և նրանք պետք է պատրաստ լինեն, որպեսզի կարողանան արտահայտել իրենց կարծիքը:

6. Ներառականություն Երեխայի մասնակցությունը պետք է լինի նեռարական, այսինքն՝ պետք է բացառվի ցանկացած տեսակի խտրականություն: Երեխաները մեկ ընդհանուր խումբ չեն և նրանք պետք է ունենան հավասար հնարավորություններ՝ իրենց անհատականությունը հաշվառմամբ:
7. Երեխաների հետ աշխատող անձանց վերապատրաստում Երեխաների հետ աշխատող անձիք պետք է վերապատրաստվեն, որպեսզի կարողանան ճիշտ շփվել երեխաների հետ: Այս հարցում հենց երեխաների մասնակցությամբ վերապատրաստումը կարող է արդյունավետ լինել:
8. Անվտանգության ապահովում Երեխան իր կարծիքը արտահայտելիս պետք է համոզված լինի, որ նրան վտանգ չի սպառնա եթե նա խոսի իրեն հուզող հարցերից:
9. Հետևողականություն Ցանկացած խորհրդատվական գործընթաց պետք է լինի հետևողական և երեխաները պետք է տեղեկացված լինեն, թե ինչպես իրենց կարծիքը լսեցին և հաշվի առան:

1993 թվականին, Կոնվենցիայի վավերացմամբ, Հայաստանի Հանրապետությունը պարտավորվեց իր օրենսդրությունը համապատասխանեցնել Կոնվենցիայի դրույթներին: Կոնվենցիայի 14 վավերացմամբ Հայաստանը նաև ճանաչեց, որ երեխան իր անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար պետք է մեծանա ընտանեկան միջավայրում, երջանկության, սիրո և ըմբռնման մթնոլորտում և լիարժեք պաշտպանված լինի:

Թեմայի արդիականությունը

Թեման արդիական է, քանի որ երեխաները մեր ժամանակներում իրենց իրավունքների պահանջատերն են և միաժամանակ կարիքն ունեն սեփական իրավունքներն ու պարտականություններն իմանալու և պաշտպանված լինելու:

Թեման մնում է արդիական ,քանի որ չնայած նրան, որ յուրաքանչյուր երեխա առողջ և բռնություններից զերծ կյանքի իրավունք ունի և այս դրույթը կարծես համընդհանուր համաձայնության առարկա է, այնուամենայնիվ, աշխարհում յուրաքանչյուր տարի միլիոնավոր երեխաներ դառնում են ֆիզիկական, սեռական և հուզական բռնությունների զոհ, տառապում այդ երևույթի շատ հաճախ, անդարձելի հետևանքներից: Մենք գրավում ենք տիեզերքն ու օվկիանոսները, շատ դեպքերում կանխատեսում ենք բնական աղետները, բայց երեխաների իրավունքների

ոտնահարումները կանխել չենք կարողանում: Աշխարհում միլիոնավոր երեխաներ սովամահ են լինում, որոշները զրկված են դպրոց հաճախելու իրավունքից և ստիպված են լինում ամենածանր աշխատանքները կատարել: Ցավոք սրտի այս տարի մենք նաև ականատես եղանք մեր հայրենակիցների և նրանց երեխաների շրջափակման մեջ հայտնվելուն:

Երեխաների հանդեպ բռնության կիրառման դեպքերի մեծ մասը չի բացահայտվում և չի գրանցվում: Մնալով չբացահայտված և արձագանք չստանալով՝ բռնության հետ կապված տրավման ունենում է գրեթե չվերականգնվող բացասական ազդեցություն: Բազմակի և կրկնվող բռնությունը զգալիորեն մեծացնում է հավանականությունը, որ երեխաների ու դեռահասների մոտ կզարգանան մի շարք բացասական հուզական (էմոցիոնալ), հոգեբանական և վարքային դրսևորումներ, որոնք հետագայում կարող են լրջորեն խեղաթյուրել կամ սահմանափակել անձի ձևավորման և զարգացման բնականոն ընթացքը: Մեծ հաշվով բռնությունը վնասում է ողջ հասարակության բարեկեցությանը:

Աշխատանքի նպատակն է

- Վեր հանել երեխայի իրավունքների խախտման բնույթն ու դրսևորումները
- Ուսումնասիրել երեխաների հանդեպ բռնությունների գործադրման երևույթի ընդհանուր պատկերը. իրավիճակը Հայաստանում
- Պարզել,թե Ի՞նչ է երեխայի հանդեպ բռնությունը,դրա տեսակները և դրսևորման ձևերը
- Մանկապարտեզի սաների մոտ ձևավորել իրենց իրավունքների, ազատությունների և պարտականությունների մասին տարրական պատկերացումներ

ԳԼՈՒԽ 1. Հայաստանում երեխայի իրավունքների պաշտպանության թիրախային հիմնահարցերը

Յուրաքանչյուր հասարակություն մինչ այսօր անցել է զարգացման իրեն հատուկ ճանապարհ, մշակել իրեն հատուկ նորմեր ու ավանդույթներ, ձևավորել որոշակի վերաբերմունք երեխաների հանդեպ և, հնարավոր է, որոշ անհամապատասխանություն, անգամ հակասություն նկատվի Կոնվենցիայի պահանջների և տվյալ հասարակությունում ընդունված նորմերի ու, ըստ այդմ, երեխաների կարգավիճակի միջև: Երեխան ծնվում է որպես կենսաբանական էակ՝ իրեն հատուկ անհատական հատկանիշներով: Ապրելով հասարակության մեջ՝ նա աստիճանաբար կուտակում է գիտելիքներ ու հմտություններ, որոնք հետագայում նրան թույլ են տալիս ստանձնել ու կատարել չափահաս մարդկանց համար նախատեսված սոցիալական դերերը՝ աշխատել, սիրել, ամուսնանալ, երեխա ունենալ ու խնամել և այլն: Այսպիսով, որպեսզի երեխաները դառնան ավագ սերնդի արժանի փոխարինողներ, այդ սերունդը պետք է հոգ տանի նրանց կենսական կարիքների բավարարման համար: Երեխաների իրավունքների մասին Կոնվենցիան որոշակի նախադրյալներ է ստեղծում : Այն ստեղծված է չափահասների կողմից, և դրանց կենսագործման հաջողությունը, թե որքանով պաշտպանված կլինեն երեխաների իրավունքները, կախված է չափահասների կամքից:

Հայաստանում երեխաներին բռնություններից պաշտպանության և այդ գործընթացում առկա բացերի ու խնդիրների մասին արտահայտված պաշտոնական դիրքորոշումը կարելի է գտնել 2014թվականին ընդունված «Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի» հայեցակարգում:

Հնարավորինս համապարփակ տվյալներ է հաղորդում 2018-2020թթ. Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտությունը, որն իրականացվել է ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության և Առողջապահության նախարարության կողմից: Հետազոտության «Երեխաների դաստիարակություն» բաժնում ներկայացված տվյալների համաձայն Հայաստանում 1-14 տարեկան տասը երեխաներից յոթը հետազոտությանը նախորդող 30 օրերի ընթացքում ենթարկվել են հոգեբանական կամ ֆիզիկական պատժի: Ընդ որում, հոգեբանական ագրեսիան (65%)

շատ ավելի տարածված է, քան ֆիզիկականը (38%): Բացի այդ, բռնի մեթոդները որպես այդպիսին հավասարապես կիրառվում են և՛ աղջիկների, և՛ տղաների նկատմամբ, այնինչ ավելի վաղ տարիքի երեխաներն ավելի հազվադեպ են բռնության ենթարկվում10: Ավելի վաղ (2014) արված «Երեխաների նկատմամբ բռնության դրսևորումները ՀՀ-ում» հետազոտության շրջանակներում կա նման եզրակացություն. «... ընտանիքում ֆիզիկական բռնության այնպիսի դրսևորումներն, ինչպիսիք են հրմշտոցն ու ապտակը, հատկապես տարածված են նյութապես առավել անապահով ընտանիքներում, ընդ որում որքան ավելի բարեկեցիկ են բնութագրել իրենց ընտանիքը հարցվողները, այդքան ավելի քիչ է նրանց հանդեպ կիրառվում նշված վարքաձևը11...»: Այս պնդումը հաստատող տվյալներ կան արտացոլված նաև Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտության արդյունքներում: Ըստ այդ հետազոտության՝ Հայաստանում երեխաների նկատմամբ բռնության դեպքերի թիվը ուղիղ համեմատական է ընտանիքի բարեկեցության մակարդակին և ծնողների կրթական աստիճանին: Սակայն պետք է հաշվի առնել նման տվյալների նաև հակառակ կողմը: Բանն այն է, որ աղքատ և անբարենպաստ վիճակում գտնվող ընտանիքում տեղի ունեցող բռնարարքները ավելի հեշտ են հայտնվում «աչքի առաջ», քանի որ նման ընտանիքը այլ պատճառներով արդեն իսկ համապատասխան կառույցների ու մասնագետների տեսադաշտում է: Բացի այդ, կարծիք կա, որ նման ընտանիքներն իրենց խնդիրները «թաքցնելու» մեխանիզմների հարցում համեմատաբար պակաս ճկուն են, քան սոցիալապես ավելի ապահով խավերին պատկանող ընտանիքները:

Փորձենք ամփոփել իրավիճակը, անդրադառնալով ՀՀ Քննչական կոմիտեի կողմից երեխաների նկատմամբ կատարված հանցագործությունների թվի և տիպի մասին տրամադրված տվյալներին: Այսպիսով, 2021 թվականին երեխաների նկատմամբ հանցագործությունների մասով 317 քրեական գործ է հարուցվել: Դրանցից 85-ը վերաբերում են երեխաների նկատմամբ ֆիզիկական բռնության որևէ ձևի կիրառմանը, 76-ը՝ երեխաների նկատմամբ սեռական բնույթի ոտնձգությունների կատարմանը, 20-ը՝ հոգեբանական բռնության կամ ճնշման կիրառմանը, 15-ը՝ երեխայի անտեսմանը կամ լքմանը, 2-ը՝ երեխաների թրաֆիքինգին կամ շահագործմանը, մնացած գործերը հարուցվել են այլ հիմքերով: Նույն աղբյուրի համաձայն, տուժող ճանաչված 305 երեխաներից 66-ի նկատմամբ (տուժող երեխաների ընդհանուր թվի 21.6%) բռնությունն իրականացվել է ընտանիքի անդամի կողմից: Ինչ վերաբերում է

ընտանիքում բռնության դեպքերին, ապա ՔԾ վարույթում գտնվող գործերով որպես տուժող ճանաչված 493 անձանցից 25-ը եղել է մինչև 12 տարեկան, 8-ը՝ 12-14 տարեկան, 24-ը՝ 14-16 տարեկան, իսկ 9-ը՝ 16-18 տարեկան: Այսպիսով, երեխաների հանդեպ բռնությունը բավականին տարածված երևույթ է Հայաստանում, եթե նկատի ունենանք հայտնաբերման հստակ մեխանիզմների բացակայության պայմաններում գրանցված դեպքերի թիվը, ապա դրանք բավականին մտահոգիչ են: Հաշվի առնելով բռնության երևույթի թողած բացասական ազդեցությունը երեխաների հետագա կյանքի վրա, թվերը ենթադրում են «ինչ-որ բան անել», քանի որ անկախ դրանց մեծությունից խոսքը երեխաների կյանքի ու կյանքի որակի մասին է:

Երեխաների իրավունքներն խարսխված են հինգ համակարգերի վրա՝ կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն, անչափահասների արդարադատություն և մշակույթ:

Երեխայի կրթության իրավունքը չի սահմանափակվում միայն դպրոց ու մանկապարտեզ գնալու հնարավորությամբ: Կրթական գործընթացից դուրս մնացող երեխան չի իրացնում կրթության իր իրավունքը: Հայաստանում մշակվող ներառական կրթության համակարգը պիտի ոչ միայն հատուկ կարիքներով երեխաներին վերաբերի, այլև այն երեխաներին, որոնք այսօր գնում են դպրոց կամ մանկապարտեզ, բայց ուսումնառության մեջ ներգրավված չեն:

Առողջական իրավունքի խնդիրներից մեկը սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումներն են, որոնց պատճառով խախտվում է իգական և արական սեռի երեխաների քանակային համամասնությունը:

Երեխաների սոցիալական պաշտպանությունը պիտի հասանելի լինի դժվարին պայմաններում գտնվող երեխաների համար, այդ թվում՝ ընտանեկան և սեռական բռնությանը ենթարկվող, վատթարագույն պայմաններում աշխատող և այլն: Հայաստանում թերի է աշխատում ուղղորդումների համակարգը. օգնության կարիք ունեցող երեխաների մասին տեղեկությունները համապատասխան հաստատություններին հաճախ չեն հասնում կամ ուշացած են հասնում: Սոցիալական ծառայությունների բարեփոխումները հնարավորություն են տալիս, որպեսզի սոցիալական աշխատողները կարողանան ավելի ակտիվ աջակցություն ցուցաբերել երեխաներին: Սոցիալական ոլորտի մի այլ խնդիր է մանկատներում գտնվող երեխաների խնամատարությունը:

Հայաստանը չունի անչափահասների համար նախատեսված հատուկ արդարադատական համակարգ: Իրավախախտ երեխաները անցնում են արդեն իսկ եղած քննչական և դատական մարմինների միջով: Շատ կարևոր է ձեռք բերել նաև կանխարգելման և վերականգնման համակարգեր:

Մշակութային իրավունքների ոլորտում չկա խնդիրների որևէ միասնական լուծում: Երեխաների մշակութային զարգացման վայրերը՝ գեղարվեստական, սպորտային և այլ դպրոցները, հիմնականում կենտրոնացած են խոշոր քաղաքներում և հասանելի չեն դրանցից դուրս:

Վերջին ժամանակներս, ցավալիորեն, ի հայտ են գալիս սաների իրավունքների խախտման դեպքեր, որոնք կատարվում են հենց մանկապարտեզների աշխատակիցների կողմից: Այս պարագայում՝

Յուրաքանչյուր երեխայի իրավունքների ոտնահարում պետք է համարվեն հետևյալ դեպքերը.

- Երբ չի ապահովվում սանի առողջության եւ կյանքի անվտանգությունը
- Սանի կարիքների անտեսումը
- Սաների նկատմամբ բռնության կիրառումը կամ նվաստացման դեպքերը
- Սանիանձեռնմխելիության խախտում
- Սաների մեկուսացումը և սպառնումը
- Սաներին՝ իրենց մտքերն ու զգացմունքներ արտահայտելու հնարավորության զրկում
- Սաների անձնական տվյալների օգտագործումը:

Երեխաների նշված իրավունքները պետք է պաշտպանված լինեն և չխախտվեն որևէ մանկական նախադպրոցական հաստատությունում:

Երեխայի լիարժեք կրթության և զարգացման համար անհրաժեշտ է ստեղծել համապատասխան մթնոլորտ մանկապարտեզում:

Հիշեք, որ երեխան հարգում է ուրիշների իրավունքները, եթե նրանք հարգում են երեխայի իրավունքները:

Շատ կարևոր է երեխաների իրավունքների պաշտպանության ամբողջական մոտեցումը, որը թույլ կտա տարբեր համակարգերին ավելի միասնական գործել և հասանելի լինել երեխաների համար:

ԳԼՈՒԽ 2. Ի՞նչ է երեխայի հանդեպ բռնությունը. սահմանումը, տեսակները և դրսևորման ձևերը

Պետք է նշել, որ երեխայի նկատմամբ բռնության սահմանումը որոշակի առանձնահատկություններ ունի: Նախ այն նշանակալիորեն պայմանավորված է ծնողների՝ երեխայից ակնկալվող վարքագծերով, հետևաբար երեխաների դեպքում բռնության գործադրման նույնականացումը շատ ավելի դժվարացած է: Այնուամենայնիվ ուսումասիրությունները ցույց են տալիս, որ կան որոշակի մոտեցումներ, որոնց շուրջ ողջ աշխարհում կան ընդհանուր համաձայնություններ: 1999թ-ին Առողջության համաշխարհային կազմակերպության Երեխաների նկատմամբ բռնության կանխարգելման խորհուրդը տվեց հետևյալ սահմանումը. «Երեխաների հանդեպ բռնությունը նշանակում է երեխայի առողջության, կյանքի, զարգացման, ինքնության իրական կամ պոտենցիալ վտանգմանը հասցնող ֆիզիկական և/կամ էմոցիոնալ դաժանության, սեռական բնույթի գործողություններ կամ անտեսման կամ բարձիթողության արարքներ՝ օգտվելով կարգավիճակից կամ պաշտոնից բխող լիազորություններից և չարաշահելով երեխայի վստահությունը»: Երեխայի նկատմամբ բռնության սահմանման կարևորագույն կետերից մեկն այն է, որ այստեղ մեծ կարևորություն չի ներկայացնում բռնություն գործադրողի կողմից կատարված արարքի կանխամտածվածության հանգամանքը՝ հաշվի առնելով երեխայի կարգավիճակի յուրահատկությունը:

Որոշ փորձագետներ բռնության ենթարկված են համարում նաև այն երեխաներին, ովքեր պատահաբար վնասվել են ծնողների գործողությունների կամ անգործության պատճառով, մինչդեռ մյուսները գտնում են, որ բռնության ենթարկված ճանաչվելու համար վնասի հասցրած գործողությունը պետք է լինի կանխամտածված: Այս համատեքստում ըստ բռնության գործադրման կանխամտածվածության աստիճանի՝ առանձնացնում են կանխամտածված և պատահական բռնարարքներ: Կանխամտածված բռնություն. ֆիզիկական ուժի կամ իշխանության (դիրքի

չարաշահում) նպատակադրված գործածում ինչ-որ մեկի, այլ անձի կամ որևէ խմբի ու համայնքի նկատմամբ, ինչը արդյունքում հանգեցնում է վերոնշյալների վնասմանը, մահվանը, հոգեբանական վնասմանը, զարգացման խանգարմանը կամ դեպրիվացիային (զրկանքի): Պատահական բռնարարք ասելով՝ նկատի ունենք, որ մի կողմից, ինչպես Վոլթերն ու Փարքն են նշում, անձի կողմից կիրառվող բռնությունը չի ընկալվում որպես բռնարարք, մյուս կողմից բռնություն գործադրողը ի սկզբանե չի ունենում զոհին վնասելու ցանկություն.

Սովորաբար առավել հայտնի են բռնության տիպերի տարանջատումը ըստ արարքի տիպի՝ ֆիզիկական, սեռական, հոգեբանական, անտեսում:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ.

Երեխայի նկատմամբ ֆիզիկական բռնությունը ֆիզիկական ցավ պատճառելու նպատակով իրականացված ցանկացած գործողություն է, օրինակ՝ երեխային անհարմար դիրքով կանգնեցնելը: Ավելի նեղ սահմանման համաձայն՝ այն հարվածի, ցնցման, վայր գցելու, թունավորման, այրելու, խեղդելու կամ այլ եղանակով/միջոցով երեխային ֆիզիկական վնաս պատճառելն է: Այստեղ կարևոր է նշել, որ նշված գործողությունները ֆիզիկական բռնություն են անգամ այն դեպքում, եթե դրանց հետևանքները «անտեսանելի» են: Ֆիզիկական բռնությունը՝ որպես այդպիսին, շատ տարբեր դրսևորումներ կարող է ունենալ, սկսած փոքր կապտուկներից մինչև մահ: Ընդհանրապես այս դրսևորումները նշանակալիորեն պայմանավորված են երեխայի տարիքի հետ, և որքան փոքր է երեխան, այնքան ավելի մեծ է ֆիզիկական վնասվածք ստանալու ռիսկը. շատ հայտնի օրինակ են նորածին երեխաներին ցնցելու/թափահարելու հետևանքով առաջացած վնասվածքները: Ֆիզիկական բռնության տեսանկյունից առանձնահատկությունը նաև այն է, որ շատ մշակույթներում ֆիզիկական պատիժը դիտարկվում է որպես երեխաներին դաստիարակելու արդյունավետ և ընդունելի միջոց: Եվ քանի որ պատիժը ևս կարող է նշանակալի վնաս հասցնել, ստացվում է, որ իրականում խոսքը երկու սերտաճած երևույթների մասին է: Ընդ որում, պատիժը կարող է ժամանակի ընթացքում վերածվել բռնության: Շատ կարևոր է նշել, որ բռնության ենթարկված երեխայի մոտ նկատվում են որոշ նշաններ, ինչպես վարքային, այնպես էլ հուզական, որոնք կարող են երեխային խնամող անձին հուշել հնարավոր բռնության կամ դրա ռիսկի մասին:

ՍԵՌԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ.

Ի տարբերություն բռնության մյուս տիպերի՝ այս մասին շատ ավելի քիչ էր խոսվում: 2006 թվականին ՄԱԿ-ի Երեխաների նկատմամբ բռնությունների մասին ուսումասիրությունը համաշխարհային հանրության ուշադրությունը հրավիրեց այս խնդրի շուրջ՝ փաստելով, որ աշխարհում մինչև 18 տարեկան 73 մլն. տղաներ և 150 մլն. աղջիկներ ենթարկվում են սեռական բռնության: Կարևոր է նշել, որ երեխաների նկատմամբ սեռական բռնություն ասելով՝ մենք նկատի ունենք սեռական վարքի տարբեր տիպերի դրսևորումները՝ սեռական անդամերի ցուցադրումից մինչև սեռական ակտ՝ ստիպելով կամ գայթակղելով երեխային (դեռահասի) մասնակցելու սեռական գործողությանը: Ըստ այդմ, բավական դժվար է սեռական բռնությունն այն իմաստով, որպեսզի սահմանումը տա երևույթի ամբողջ պատկերը:

Երեխաների նկատմամբ սեռական բռնության հիմական բնութագրիչները ներառում են՝

- բռնարարը փորձում է հենվել երեխայի վստահության չարաշահման վրա, քան ֆիզիկական ուժի կիրառման. արդյունքում սովորաբար դա երեխայի և բռնացողի «գաղտնի պայմանավորվածությունն» է,
- սովորաբար երեխան շատ լավ է ճանաչում բռնարարին,
- բռնարարն իր գործողությունների համար պատասխանատվություն չի զգում,
- բռնության գործադրման նպատակը սեռական բավականություն ստանալն է,
- սովորաբար երեխաներին դա դուր չի գալիս, և ուզում են դադարեցնել, միևնույն ժամանակ ֆիզիկական կապվածության և ուշադրության կարիքը կարող է երբեմն հանգեցնել նրանց ակնհայտ մասնակցությանը կամ պատրաստակամությանը,
- այն կրում է շարունակական բնույթ, կարող է տևել շաբաթներ կամ տարիներ,
- երեխայի ներգրավումը որպես կանոն իրականացվում է աստիճանաբար՝ առանձին դրվագների կրկնմամբ:

ԲԱՐՁԻԹՈՂՈՒԹՅՈՒՆ/ԱՆՏԵՍՈՒՄ.

Կարելի է ասել, որ անտեսումը երեխաների նկատմամբ վատ վերաբերմունքի ամենատարածված ձևերից մեկն է, միևնույն ժամանակ այն նաև ամենաքիչ բարձրաձայնվածն է: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ պատմականորեն անտեսումը ոչ միշտ է դիտարկվել որպես բռնություն: Ներկայումս, ոլորտի մասնագետներն ու հետազոտողները երեխայի անտեսումը, այդ թվում երեխայի

խնամակալների կողմից խնամքի թերացումներով պայմանավորված վնասումը համարում են բռնություն:

Այն, թե ինչպես կիրականացվի երեխաների պաշտպանությունը անտեսումից, մեծապես պայմանավորված է նրանով, թե ինչպես ենք սահմանում «անտեսում» հասկացությունը: Հաշվի առնելով այն, որ դա բռնության քողարկված ձև է, որը երեխայի վրա ներգործում է զանազան եղանակներով՝ ներառյալ աճի և զարգացման խանգարումը, առողջության վատթարացումը և այլն, դժվարեցնում է ամբողջական/համալիր սահմանում տալու խնդիրը:

Համաձայն գրականության՝ բարձիթողությունը սահմանվում է որպես երեխայի ծնողի կամ խնամակալի կողմից երեխայի ֆիզիկական և հոգեբանական կարիքները բավարարելու շարունակական և տևական անտեսում, այդ թվում գործողության կատարման կամ անգործության եղանակով, ինչը լրջորեն վնասում է երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջությունն ու զարգացումը:

Կարևոր առանձնահատկությունները.

Աղքատությունը երեխաների հանդեպ բռնության և անտարբերության դրսևորման հիմական պատճառներից է, քանի որ այն ընտանիքում շատ դժվարություններ է առաջացնում և կարող է խոչընդոտ հանդիսանալ ծնողների համար՝ բավարարելու իրենց երեխաների հիմական պահանջմունքները, սակայն դա միանշանակ չէ: Բարձիթողությունը բնորոշվում է ծնողական խնամքի բացթողումների, արարքների միջոցով: Երբեմն այն հայտնի է որպես «պասիվ բռնություն», անկարողություն ապահովելու կամ արձագանքելու աճող երեխայի փոփոխվող կարիքներին՝ սկսած ծնողների ինտելեկտուալ ռեսուրսներով պայմանավորված համապատասխան քայլեր ձեռնարկելու ունակության պակասից մինչև երեխային հիմական պահանջմունքների բավարարումից միտումավոր ձևով զրկելը (սնունդը, ջերմությունը, պաշտպանությունը և կապվածությունը)՝ որպես պատիժ կամ դաստիարակության միջոց: Բարձիթողությունը կարող է ներառել ֆիզիկական խնամքի անբավարարություն, սահմանափակ էմոցիոնալ արձագանք, վերահսկողության բացակայություն և բժշկական օգնության չդիմելը (երբ ակնհայտորեն կարիք կա): Այն հազվադեպ է արտահայտվում մեկ եզակի դեպքի միջոցով. բարձիթողությունը սովորաբար քրոնիկ բնույթ ունի: Հոգեկան առողջության խնդիրները, մտավոր դժվարությունները, իրականության սխալ ընկալումը, աղքատությունը բնորոշ գիծ են

անտեսող ծնողների պատմության մեջ: Նրանց պրոբլեմները հաճախ բազմաթիվ են: Բարձիթողության որոշ դրսևորումներ փոխանցվում են սերնդեսերունդ (օրինակ, խնամքի կանոններ, վերաբերմունքի վարքագծեր և այլն): Բարձիթողության այս շարունակական հետևանքների խումբը հայտնի է որպես «դեպրիվացիայի ցիկլ»: Շատ ծնողներ, ովքեր բարձիթողության են մատնում իրենց երեխաներին, հնարավոր է, որ լավ ծնող լինելու համար հմտությունների, ռեսուրսների և մոտիվացիայի պակաս են զգում: Բարձիթողության ենթարկված երեխաները, մեծանալով սահմանափակ հմտություններով և ունակություններով չափահասների կողքին, գտնվում են հետագայում անտարբեր ծնող դառնալու լուրջ ռիսկերի ներքո, քանի որ իրենց ներկան կարող է ընկալվել որպես նորմ:

Առանձնացվում են բարձիթողության մի քանի մակարդակ.

- Թեթև. Սրանք այն դեպքերն են, որոնց պարագայում համայնքը փորձում է իր միջոցներով արձագանքել դեպքերին, սակայն կարող է նաև դրա կարիքը չլինել, քանի որ գործողությունները էական ազդեցություն կարող են չունենալ երեխայի զարգացման վրա (օրինակ՝ ծնողը երեխային նստեցնում է մեքենայի ղեկի մոտ):
- Միջին ծանրության. Այս մակարդակում որոշակի միջամտություն իրականացնելու կարիք կա, քանի որ գործողությունը կամ անգործությունը նշանակալի ազդեցություն են գործում երեխայի զարգացման և առողջության վրա, օրինակ՝ երեխան շարունակաբար հագնվում է եղանակին անհամապատասխան (ամառային հագուստ ձմռանը):
- Ծանր. Սա ներառում է այն դեպքերը, երբ երեխային ծանր և երկարաժամկետ վնաս է հասցվել:

Սրանք այն դեպքերն են, երբ կարիք կա պաշտպանական միջոցների կիրառման: Օրինակ՝ հրատապ բժշկական միջամտության կարիք ունեցող երեխան չի տարվել հիվանդանոց: Ծանր տիպ է նաև երեխային լքելը, թողնելը կյանքի համար անբարենպաստ պայմաններում, մայրական դեպրիվացիան28:

Պետք է նկատի ունենալ, որ անտեսման լրջությունը կախված է ոչ միայն հետևանքից, այլև դրա քրոնիկ լինելու բնույթից, այսինքն նշված գործողության կամ անգործության կրկնման հաճախականությունից ու ժամանակահատվածից:

ՀՈՒԶԱԿԱՆ (ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ) ԲՌՆՈՒԹՅՈՒՆ.

Ինչպես անտեսման պարագայում, հուզական բռնության դեպքում ևս մենք խոսում ենք ավելի քիչ ուշադրության արժանացած երևույթի մասին: Մշակութային գործոնները սովորաբար շատ ավելի հանդուրժող են ծնողների կողմից երեխաների նկատմամբ կիրառվող ոչ ֆիզիկական տեխնիկաների նկատմամբ, որոնք կիրառվում են երեխային «կարգ ու կանոն» սովորեցնելու նպատակով: Քանի որ բռնության այս տիպը հանդես կարող է գալ ինչպես առանձին, այնպես էլ զուգայցված բռնության այլ տեսակների հետ, այն դժվար է սահմանել և բացահայտել: Միևնույն ժամանակ դրա հետևանքները բավականին լուրջ են և հաճախ երեխային խանգարում են հետագայում դառնալ լիարժեք չափահաս՝ վնասելով երեխայի հուզական զարգացումը: Պետք է նաև նշել, որ հուզական բռնության հետևանքները որպես այդպիսին տարբերվում են՝ կախված երեխայի միջավայրից և տարիքից:

Հուզական բռնությունը ներառում է երեխայի ազատ տեղաշարժի սահմանափակումը, ծաղրելը, սպառնալը, ահաբեկումը, խտրական վերաբերմունքը, մերժումը, թշնամանքի ոչ ֆիզիկական դրսևորումները, փչացնելը, ներառյալ բռնությանը ականատես լինելը: Վերջինս կարող է ներառել երեխային ստիպելը՝ դիտելու բռնության գործողությունը կամ դրան պատահաբար ականատես լինելը:

Հուզական բռնության բնութագրիչները -հեշտ չէ բացահայտել: Երեխայի կրկնվող բացասական զգացումները, օրինակ՝ քննադատությունը, վախեցնելը կամ ծաղրանքը երեխաներին «համոզում են», որ նրանք անպետք են, չսիրված և անցանկալի: Պետք է նկատի ունենալ նաև, որ հոգեբանական բռնությունը ոչ միշտ է գիտակցվում գործադրողի կողմից, օրինակ ծնողների մեծամասնությունը անգիտակցաբար է հուզական բռնություն գործադրում (մասնավորապես ծնողների միջև առկա բախումները և բռնարարքները կարող են երեխային հուզական բռնություն պատճառել):

Գործնական աշխատանք

Գործնական աշխատանքն անց եմ կացրել ավագ նախադպրոցական տարիքի երեխաների խմբում: Նախնական աշխատանքները կատարել եմ Հույսիմ Կամուրջ հասարակական կազմակերպության կողմից թողարկած „Արևածաղիկ„ Մանկապատանեկան ամսաթերթի 47-րդ համարում զետեղված „Մենք ունենք իրավունք„ խորագրով նյութերից և Յունիսեֆ-ի կողմից տպագրված և ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից երաշխավորված „Բարև„ ձեռնարկի „Իմ

Ուսումնասիրել և քննարկել ենք `

- սաների ունեցած պարտականությունները՝տանը և մանկապարտեզում
- երեխաների իրավունքների համաձայնագրի որոշ կետեր /Հոդվածներ 1,2,7,9,11,12-15,22,23,28,30,32,34,38,42/

Խաղ-Ինչն է կարևոր իմ կարծիքով/ Անհրաժեշտ է՝ մեկ պարան, ամրակներ, նկարներ

Հանձնարարություն-պարանին կախեք այն առարկաների նկարները,որոնք անհրաժեշտ են մերմ երկրում ապրող երեխաներին

Պարանին կախեք այն առարկաների նկարները,որոնք անհրաժեշտ են այլ երկրներում ապրող երեխաներին

Այս նկարներից առանձնացրեք այն ամենն ինչն անհրաժեշտ են աշխարհիբոլոր երեխաներին,անկախ նրանից,թե որտեղ են ապրում;

Ընթերցել և երեխաների հետ քննարկել ենք „Ամենակարևոր մարդը„ և „Խելոք մարդը„ պատմվածքներ:

Նկարչություն-Ես և իմ ընտանիքը

Աշխատանք քարտերով- Տանն ով ինչ աշխատանք է կատարում

Պարապմունք

Թեմա-Իմ իրավունքներն ու պարտականությունները

Ծրագրային բաղադրիչ-Խոսքի զարգացում

Խումբ -Ավագ նախադպրոցական

Տևողությունը-25-30 րոպե

Նպատակը

- Ամրապնդել երեխաների ունեցած գիտելիքները իրենց իրավունքների և պարտականությունների մասին
- Կատարելագործել երեխաների ունեցած պատկերացումները բնության մեջ մարդու աշխատանքի կարևորության մասին

Կնպաստի հետևյան կարողունակությունների ձևավորմանը

- ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն՝ նախադպրոցական տարիքում երեխան ունի տարրական պատկերացումներ սեփական իրավունքների ու պարտականությունների մասին.
- լեզվական և հաղորդակցական կարողունակություն՝ երեխան ընդունակ է ճանաչել բանավոր ներկայացվող երևույթները, ըմբռնել, նկարագրել, մեկնաբանել դրանք, ներկայացնել բացատրություններ,ինքնուրույն ձևակերպում է սեփական մտքերը՝ ազատ և կապակցված արտահայտելով կարծիք, վերաբերմունք որևէ երևույթի մասին
- ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն՝երեխան դրսևորում է ակտիվություն, հետաքրքրասիրություն, ճանաչողական հետաքրքրություն աշխարհի, առարկաների և երևույթների, ինչպես նաև հարաբերությունների կառուցման հանդեպ: Երեխան հաճույքով (ակտիվ) ներգրավվում է գործունեության տարբեր ձևերի, մտավոր տարբեր գործողությունների, նոր բացահայտումների մեջ.
- ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն՝երեխան Ճանաչում է մեծահասակների և հասակակիցների փոխհարաբերություններում սահմանված վարքային կանոնները և դրսևորում է սոցիալապես ընդունված նորմերին համապատասխան վարք

Կապը չափորոշիչ հետ՝ ԽՀ/գ,շ/ Ի/ա,գ/ ՀՍԱ/ը,թ/ ԻԱԱ/է/

Վերջնարդյունքներ

- Կիմանա իր իրավունքներն ու պարտականությունները
- Կարտահայտի իր կարծիքը՝դրսևորելով քննադատական վերաբերմունք
- Կհետևի խմբում ձևավորված պարզ կանոններին
- Կբացատրի բնության մեջ մարդու աշխատանքի,ունեցած պարտականությունների կարևորությունը

Օգտագործած նյութեր -հեքիաթների սյուժեներ պատկերող՝ նկարներ,գնդակ,ընթերցանության թեմային համապատասխան պաստառ

Պարապմունքի ընթացքը

Երեխաները կանգնում են շրջանով,իրար ձեռք բռնած և յուրաքանչյուրն իր կողքի ընկերոջը նայելով ասում է նրա անունն ու անվան փաղաքշական ձևը.

Դաստիարակ-երեխաներ մենք ինչ հասկացանք,որ ձեզանից յուրաքանչյուրն ինչ ունի

Երեխաներ-անուն

Դաստիարակ-այո ,յուրաքանչյուր երեխա ունի անուն ունենալու իրավունք: Կհիշեցնեք, թե էլ ինչի իրավունք ունի յուրաքանչյուր երեխա

Երեխաներ-ընտանիք ունենալու,հանգստի իրավունք,ապրելու իրավունք,սովորելու,սնվելու,առողջության պահպանման և անվճար բուժսպասարկման իրավունք,ազատ կարծիք հայտնելու իրավունք,անձնական տարածքի անձեռնամխելիության իրավունք...

Դաստիարակ-շնորհակալություն,որ այս կարևոր կետերն ինձ հիշեցրեցիք,իսկ այժմ մոտեցեք ձեր սեղանների մոտ դրված հեքիաթների նկարները պատկերող քարտերին,ուսումնասիրեք դրանք,հասկացեք,թե որ հեքիաթներն են պատկերված: Իսկ հիմա ես կասեմ խախտված իրավունքը,իսկ դուք,թե որ հեքիաթին է վերաբերվում

- Որ հեքիաթներում է խախտված կյանքի իրավունքը/„Գնդլիկ բոքոնիկը„ , „Գայլն ու յոթ ուլիկները„ , „Երեք խոզուկները„ , „Կարմիր գլխարկը/
- Որ հեքիաթներում է խախտված անձնական տարածքի անձեռնմխելիության իրավունքները/„Պալատիկը„ , „Աքլորի և աղվեսի տները„ , „ Երեք խոզուկները„

- Որ հեքիաթներում է խախտված սովորելու իրավունքը/,,Բուրատինո,,/
- Առողջության պահպանման իրավունքը/,,Բժիշկ Այբոլիտ,,/

Ֆիզկուլտ դադար

Երեխաները շրջանով կանգնում են դաստիարակն թվարկում է կանոններ և նետում գնդակը: Եթե երեխան համաձայն է՝ բռնում է գնդակը ու ցատկում,եթե ոչ՝ կքանստում

- Հաց ուտելիս չեն խոսում
- Հազալիս կամ փռշտալիս փակում են բերանը թաշկինակով կամ արմունկով
- Կենդանիներին չեն նեղացնում
- Ընկերոջը չեն ընդհատում
- Պահպանում են ընդունված կանոնները
- Ընկերոջը դիմում են անունով
- Օգնում են նրան ով դրա կարիքն ունի...

Ընթերցանություն

/Պարտականություններն են իրավունքներ տալիս,սովորում ենք պարտավորություններից/

Լին ֆուն Վիետնամում

Լին Ֆուն տասնմեկ տարեկան է և ապրում է Վիետնամում: Կեսօրին, երբ ավարտվում են դասերը նա պարանով կապում է դասագրքերը, գցում ուսին և գնում տուն; Տուն մտնելով՝ նա գրքերի կապոցը կաղում է դռան կողքի մեխից և անցնում գործի: Նրա խնամքին է հանձնված իրենց տան ամենաթանկ ունեցվածքը՝ ջրացուլը: Ամեն օր տղան ջրացուլին տանում է գետը, որպեսզի նա ջուր խմի և լողանա: Նա ջուրը շփում է ջրացուլի վրա ու քերում նրա խիտ մորթին: Ջրացուլն ու ԼԻՆ Ֆուն խաղ են անում և ուրախանում: Հետո տղան նրան տանում է արոտի: Մինչ ցուլն արածում է Լին Ֆուն նրա լայն մեջքին նստած իր տնային աշխատանքներն է կատարում: Երբ արևը մայր է մտնում տղան ջրացուլին տանում է տուն, ապա ճաշում իր ընտանիքի հետ, զրուցում, խաղ անում ու կատարում կիսատ մնացած դասերը:

Երբ Լին Ֆուն պառկում է քնելու, նա մտածում է ջրացուլի մասին, որի համար ինքն է պատասխանատու: Ինքը՝ փոքրիկ Լին Ֆուն, հոգ է տանում ընտանիքի ամենաթանկարժեք ու ամենակարևոր ունեցվածքի մասին: Նա հպարտանում է դրանով: Նա զգում է, որ օգնում է ընտանիքին, նա զգում է, որ ընտանիքն ունի իր կարիքը...

Վերհիշել

Ինչի համար են երեխաները պատասխանատու տանը/ջրացուլերը տանը/

Երեխաների պատասխաններ

Ինչ պարտականություններ երեխաներն ունեն մանկապարտեզում/ջրացուլերը մանկապարտեզում/

Երեխաների պատասխանները

Դիտորդների դիտարկումներ

Դիտորդներ-երկու դաստիարակ , տնօրենը և մանկապարտեզի հոգեբանը

Պարապմունքի կառուցվածքը ճիշտ էր, թեման համապատասխանում էր ծրագրային բովանդակությանը ու տվյալ տարիքային խմբի երեխաների զարգացվածության մակարդակին, ուսուցման ժամանակն օգտագործվեց ռացիոնալ: Պահպանված էր կապը նախկինում անցած նյութերի հետ: Օգտագործված դինամիկ դադարները նպաստում էին սաների կենտրոնացվածության և ուշադրության բարձրացմանը: Դաստիարակն ուշադրություն էր դարձնում բոլոր երեխաների ակտիվության ու հմուտ մեթոդներով ներգրավում պասիվ երեխաներին:

Պարապմունքի ողջ ընթացքում սաների մոտ նկատվում էր բարձր տրամադրություն, խոսակցային, շարժողական և իմացական ակտիվություն: Պատմության ընթերցանության ընթացքում հուզականորեն արձագանքում էին դաստիարակի ձայնային փոփոխություններին, հետաքրքրված էին հերոսի ճակատագրով: Կշռադատման փուլը պարզ դարձրեց, որ դաստիարակը հասավ պարապմունքի նպատակներին:

Եզրակացություն

Այսպիսով նշված խնդրի վերաբերյալ մանկավարժական հետազոտության վերլուծությունը թույլ տվեց պարզել, որ երեխաների սոցիալական պաշտպանության ժամանակակից տեսանկյունով կազմակերպումը բավականին բարդ գործընթաց է: Պարզ դարձան ՀՀ-ում առկա թիրախային կետերը, որոնք համակարգային լուծում են պահանջում: Հետազոտությունը բացահայտեց երեխաներին իրենց իրավունքները սովորեցնելու նոր ռազմավարություններ և մարտավարություններ:

Մանկավարժական հետազոտությունները ապացուցում են, որ ավելի մեծ նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալական պաշտպանության արդյունավետ կազմակերպումը հնարավոր է մանկավարժական մի շարք պայմանների դեպքում: Այդ պայմաններն են.

- անհատի ստեղծագործական ինքնազարգացման համար առարկայական զարգացող միջավայրի ստեղծում.
- կրթական գործունեության պլանավորում;
- ծնողական կրթություն
- անհատականության վրա հիմնված մանկավարժական աջակցություն
- կառավարման նոր գրականության ուսումնասիրություն;
- մասնագետների հետ աշխատանքային պլանների համատեղ կազմում.
- սոցիալական պաշտպանության կազմակերպման վերաբերյալ նախադպրոցական ուսումնական հաստատության աշխատանքի մանրամասն վերլուծություն

Օգտագործած գրականության ցանկ

1. ՀՀ սահմանադրություն;
2. “Կրթության մասին” ՀՀ օրենքը;
3. “Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ-ներ,Երևան 2021թ.;
4. Նախադպրոցական կրթության հիմնական կրթական ծրագրեր,Երևան 2021թ.;
5. Նախադպրոցական կրթության մասին” ՀՀ օրենք;
6. ՆՈՒՀ օրինակելի կանոնադրությունը;
7. Այվազյան Վ.Ն. Մարդու իրավունքների պաշտպանության կազմակերպումը ՀՀում, Երևան 2000թ.;
8. ՀՀ ընտանեկան օրենսգիրք, Երևան 2005թ.
9. Մանկապարտեզի տնօրենի ուղեցույց, Երևան 2008թ. 10. ՀՀ սոցիալական ոլորտի իրավական ակտերի ժողովածու, Երևան 2
10. ՄԱԿ-ի 1989 թվականի նոյեմբերի 20-ի «Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա», Պրեամբուլա, http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=60503
11. Երեխայի հանդեպ բռնության դեմ պայքարի հայեցակարգ, ՀՀ, 2014; https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2104/12/51-2_1ardz.pdf
12. http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/CRC.C.GC.13_en.pdf 7 Երեխայի լսված լինելու իարվունքը, Երեխայի իրավունքների կոմիտե, 2009 թվական, http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/AdvanceVersions/CRC-C-GC-12.pdf
13. https://lib.armedu.am/files/resource/files/2022-12-27/c8a60b5df09c07742e3499bf94e22aea.pdf
14. http://www.un.am/res/UN%20Treaties/III_12.pdf , էջ 3: